ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԵՐԹՈՎ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

16.06.2023 20:50

Այսօր ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքից մեկնարկել է փաստաբանների երթը դեպի Հայաստանում ԵՄ պատվիրակության գրասենյակ:

Երթը նպատակ ուներ հանրության և միջազգային կառույցների ուշադրությունը հրավիրել վերջին շրջանում ոստիկանության ծառայողների կողմից փաստաբանների նկատմամբ կիրառվող բռնության դեպքերի առնչությամբ, ինչպես նաև հանրային իրազեկման եղանակով հասնել համապատասխան կառույցների պատշաճ արձագանքին և կանխարգելել նմանատիպ դեպքերը:

Հիշեցնենք, որ վերջին նման դեպքը տեղի էր ունեցել 2023թ. հունիսի 7-ին, երբ ՆԳՆ Ոստիկանության Երևանի քաղաքի վարչության Կենտրոն բաժնում ոստիկանության մի խումբ ծառայողներ ծեծի էին ենթարկել փաստաբան Կարեն Ալավերդյանին, նրա նկատմամբ կիրառել ձեռնաշղթաներ և արցունքաբեր գազ, ինչպես նաև ձերբակալել էին և խուզարկության ենթարկել:

ԵՄ պատվիրակության ընտրությունը հատկանշական էր եվրոպացի գործընկերներին իրազեկելու առումով, որ ՀՀ դատաիրավավական բարեփոխումների ֆինանսավորման համար հատկացվող ԵՄ միջոցներն ուղղվում են փաստաբանների նկատմամբ բռնարարքներին:

Երթի մասնակից փաստաբանները նշված հարցով ԵՄ պատվիրակությանը ներկայացրեցին նաև գրավոր դիմում:

Հանրային իրազեկման նմանատիպ գործողությունները, ինչպես քննարկվել և արձանագրվել է 2023թ. հունիսի 13-ին տեղի ունեցած փաստաբանների ակումբի նիստի արդյունքներով, լինելու են շարունակական՝ մինչև նիստի արդյունքներով արձանագրված պահանջների իրագործումը պատկան մարմինների կողմից:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })